



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հոկտեմբերի 2017 թվականի N 98-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 762 որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և համաձայն ՀՀ Սյունիքի ներմարզային երթուղիներում ընդհանուր օտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 4-ի նիստի N 1 արձանագրության՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հաստատել Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային մարզային հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբեր 4-ի N 1 նիստի արդյունքները՝ համաձայն հավելվածի:

2. «Սիսիան-Շաքի» երթուղու սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Ա Ր Ճ Ա Ն Ա Վ Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 4 հոկտեմբերի 2017 թվականի N 1 նիստի

Օրակարգում – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2017 թվականի հոկտեմբերի 3-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի թվով հինգ անդամներ և նիստը վարում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռ. Ավետիսյանը:

Լսեցին – ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով 2017 թվականի հոկտեմբերի 3-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման մասին:

/ Ջեյ. Ս. Աղաբեկյան/


Ուսումնասիրելով կայացած մրցույթի ընթացքում մասնակցի ներկայացրած հայտը և գնահատելով մրցույթին ներկայացված տրանսպորտային միջոցների տեխնիկական միժակները մրցույթային հանձնաժողովը որոշում է.

1. Հաղթող ճանաչել «ՇԱՆԹ-ՈՐՈՏ» արտադրական կուպերատիվին ներմարզային հետևյալ երթուղում.

1.1 «Սիսիան-Շաքի» ավտոմեքենայի մակնիշը «ՖՈՐԴ» պետհամարանիշը՝ 2600894(3181L):

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետի հաստատմանը:

(Զվեարկության արդյունքները՝ կողմ՝ 5, դեմ՝ չկա, ձեռնպահ՝ չկա):

Հանձնաժողովի նախագահի տեղակալ  Ռ. Ավետիսյան

անդամներ  Ս. Աղաբեկյան

 Ա. Ասրյան

 Ս. Ավետիսյան

 Ս Արզումանյան